

որ մեր Ս. Գրիգոր Լուսաւորչի թռուան Գրիգորիսէ սկսեալ, Աղուանից կաթողիկոսներուն վեցերորդն է Կաղանկատուացւոյն վերի յիշատակարանին համաձայն (անդ, էջ 274): Յետոյ Աղուան ճգնաւոր մը, Պանոն անուամբ, կը վերաշինէ նոյն վանքը. բայց ամէն պարագայի տակ, հայ արքունիքի ծախքով կը շինուի, յանուն Ս. Կաթողիկէին Վաղարշապատու, ինչպէս կը յարէ Անաստաս վրդ.: Սակայն Դ. դարու յիշատակարան մը, Ձիթենեաց լերան հայկական այս վանքին ծագումը տարբեր կերպով կ'աւանդէ մեզ: Պալլատիոս կը գրէ թէ (Hist. Laus, Ch. XLIV): «Յուլիանոս Ուրացողէն յետոյ, իննովկենտիոս քահանան սուրբ Լերան վրայ շինեց (385) մատուռ մը, ուր կը պահէր Սեբաստիոյ հեթանոսներուն վանաալութենէն զերծ մնացած սուրբ Յովհաննու Կարապետի մասունքները»: Պալլատիոս մէկ տարի ապրած էր Ձիթենեաց լերան վրայ (412-13), հետեւաբար իր ականատեսի վկայութիւնը արժէքաւոր կը նկատուի: Այս մատրան նաւակատիքը կը կոտորուէր Սեպտ. 29ին, վրացերէն Սաղիմական հնագոյն ծիսարանի համաձայն. (Sht'u R. B. 1924. էջ 611-623): Արդէն ուր կար սուրբի մը մասունքը կամ տապանը, հոն եկեղեցի կամ վանք չինել ի հնումն կանոնական սովորութիւն մըն էր: Կ'երեւի պարագայից բերումով, արդէն հիմնարկուած վանքի մը միասնաբար կը տիրանան Հայք և Աղուանք, և յանուն Վաղարշապատի Ս. Կաթողիկէին արքունական ճոխութեամբ կը զօրղարեն նոյն վանքը: Պարսկական եւ արաբական տիրապետութեան շրջանին, այս վանքը անտարակոյս ենթարկուած է Ձիթենեաց լերան միւս վանքերու ճակատագրին: Սակայն նոյն վանքը Թ. դարու սկիզբները, վերանորոգուած կը գտնենք: Նոյն միջոցին Մեծն Կարողոսի և Պաղատաի խալիֆային միջեւ համաձայնութիւն մը կնքուած էր, որով Մեծն Կարողոս՝ Ս. Քաղաքին թեարկութիւնը ստանձնելով՝ առատաձեռն գումարներով վերաշինել կու տար վանքերն ու եկեղեցիներն ու կը հոգար վանականները. զրկած էր մասնաւոր պաշտօնեայ մը յերուսակէմ, և անոր միջոցաւ նպաստի գրամ կը բաշխէր վանականաց. նոյն պաշտօնէին գրի առած Ս. Տեղեաց ու կրօնաւորաց վիճակագրական Ցուցակը ամփոփուած է յիշատակարանի մը մէջ, որ կը կոչուի *Commemoratorium de Tasis Dei*: Արդ այս յիշատակարանին համաձայն, կը հասկցուի որ Բյրի եկեղեցւոյն վանա-